

արար տեսանել միւս անգամ զսուրբ դամբարան
Սրբոյ Մկրտչին եւ զայլոց սրբոց եւ զեղբայրական
գումարս: Եւ իբրեւ առեալ զոգեպահչիկ կերակուրն՝
զետեղեալ լինէսք իւրաքանչիւրքս ի սահմանեալ
մենարանիս, իբր սակաւ ինչ շունչ առնուլ, եւ ի
թոյլարուութենէ վերին խնամոցն, վասն մերս պար-
տականութեան Տեառն քանքարին, հոլմոց ներ-
հակաց պատահեալ միմեանց ի ներքոյ երկրի, յան-
կարծ իսկ թնդամամբ շարժեցաւ երկիր ի հիմանէ
անտի՝ սկսանելով յՆկեղեաց գաւառէն եւ հասա-
նելով առ մեզ:

Ո՛հ եւ եղևկ ժամուն այնմիկ թէ զինչ գոր-
ծեցաւ, եւ սրպիտի թշւառութիւնք զմեզ պատե-
ցին. զի այնքան ահագին էր շարժումն, որ զան-
շարժելի լերինսն ի միմեանս հարկանէր եւ զահա-
գին մեծամեծ վէմնս պատառէր. եւ զգնացս գեղե-
ցիկ աղբերաց արգիլեալ ի բազում ժամս ի ցամա-
քութիւն փոխէր զտեղին: Զի տեսողք ոմանք
ստուգելով ասացին թէ՝ առիվայր գնացքն Եփրա-
տայ ահագին գետոյն՝ ընդկրունկն դարձեալ՝ ջուրքն
ընդ երեսս դաշտին սփռէին¹:

Եւ մինչ վաղվաղուկ, երկիւղալիբ շուտափու-
թութեամբ՝ հանգերձ ամենայն միաբանիւք իբր
արք հարիւր՝ արտասուագոչ հառաչմամբ, Ասայելի

¹ Այսպիսի սոսկալի խախտի ժամանակ տարօրինակ չէ
աղբիւրներու ցամաքումը, նոր աղբիւրներու բղտումը եւ-
այլն: Ինձիճեան նման դէպք մը Երասխի մասին կը պատմե
լսելով տեղացի ծերունիներէն. «պատմեցին մեզ ծերունիք
ի բնակչացն առ Երասխու, թէ ի սկիզբ անցեալ դարու
յահագին երկրաշարժութենէ որ ի Բասին, ընթացք Երաս-
խայ արգելու գաւուրս ինչ ի նմին գաւառի. մինչեւ առ
սակաւ սակաւ այլ ճանապարհ հորդեալ իւր մօտ յառա-
ջինն այնպէս ընթանալ սկսաւ, եւ ի նմին ցամաքեալ ճա-
նապարհի յորում գնայր յառաջն՝ բազում հնութիւնք ի
յայտ եկին» (Ինձիճեան անդ. էջ 26):